

## ԱՌԱՔԵԼ ԴԱԻՐԻԺԵՑԻ

### ԵՒ ԻՐ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հայոց պատմութեան անդաստանը ճաշակուած է շնորհիւ իւր պատմագիրներէ, որոնք համաձայն իրենց ունեցած ներքին մղումի կամ բաւ հղած թելագրութեան ու հրահանդիս, սկսեալ եւ Դարից մինչև այսօր՝ մերօրեայ ճոխ գրականութեան ու լայն հրահարուորութիւններէ դարը, շղթայի օղակներէ պէս մէկը միւսին աղուցուած, եկել հասել են մեզ:

Եթէ որեւէ գրական ճիւղ առանձին վերացրած մեծ կարեւորութիւն ունի, ապա դրանց միջից պատմագրութիւնն ունի այդ ճիւղերի հաւաքական կարեւորութիւնը, քանի որ այն իւր մէջ պարփակուած է մի ազդի մշակութիւն վերաբերող ամբողջութիւնը: Ինչպէս զանազան դարերում առաւել կամ նուազ չափերով, նոյնպէս եւ ԺԷ Դարում ունեցել ենք պատմագիրներ ու ժամանակագիրներ, որոնց մէջ իւր ուրոյն տեղն ունի պատմագիր Առաքել (կամ Առաքեալ) Վարդապետ Դարբիժեցին:

Առաքել Դարբիժեցին ծնուել է Իրանի Ատրպատական նահանգի Դարբիժ (Թաւրիզ) քաղաքում, ԺՁ Դարի վերջերին կամ ԺԷ Դարի սկիզբներին: Մանկութիւնը անց է կացրել Թաւրիզում, ապա ուսանել է Էջմիածնում եւ վարդապետ ձեռնադրուելով դարձել նոյն վանքի տնօրէն:

Որպէս Փիլիպպոս Կաթողիկոսի ձեռնադրուած աշակերտ, կատարել է նաեւ նուիրակի պաշտօն, շրջելով մի շարք երկիրներ, ինչպէս՝ Արեւմտեան Հայաստան՝ Ամասիա, Մծբին, Ուտհա, Իրան՝ Սպահան (Նոր-Ջուղա), Չահարմահալ<sup>1</sup> (Գեանդիման), ինչ-

պէս եւ Հալէպ, Երուսաղէմ, Յունաստան եւ այլ վայրեր: Իւր այս շրջագայութեանց ընթացքում նախասիրութիւն է ունեցել հաւաքելու գրչագրերի յիշատակարաններ, որոնցից եւ օգտուել է Ս. Գրիգոր Լուսաւոր: Ի Սէլ՝ պատմութիւնը շարագրելիս:

Դարբիժեցին իւր «Պատմութիւն»ը գրի է տռել Փիլիպպոս Կաթողիկոսի հրահանգով 1651 թուին եւ շարունակել մինչև 1655 թոււը՝ Կաթողիկոսի վախճանումը, ապա դար տալով աշխատանքին մինչև 1658 թոււը, կրկին շարունակուած է այն մինչև 1662:

Պատմագրութիւնը ընդգրկում է վաթսուս տարի, 1602 թուից մինչև 1662 թոււը, դրոյ գրի առնելու համար, ինչպէս պատմում է ինքն իւր գրքի յիշատակարանում, ինն տարի շրջում է ամէնուրեք, յոգնութիւն ու նեղութիւններ կրում, նիւթակտն մեծ ծախսեր անում, առանց ունէ մէկի օգնութեան ու օժանդակութեան:

Առաքել Դարբիժեցու «Պատմութիւն»ը մեծ մասամբ վերաբերում է Շահ Աբասեան մեծ զաւթին, որին եւ ժամանակակից է ինքը՝ բացի այս, այլ կարեւոր տեղեկութիւններ եւ կան այնտեղ, որոնք աւելի են արժէքաւորում իւր կրած նեղութիւնները:

Դարբիժեցու պատմութիւնն ունի «Պատմութիւն Աստիլ վարդապետի Դարբիժեցւոյ սակս դիպումածը Հայաստանեայց եւ գաւառին Արարատայ եւ մասին Գողթամ գաւառի սկսեալ ի ՌՄԱ (1602) քաւականիմ Հայոց մինչ ի ՌձԺԱ (1662) ք»<sup>2</sup> եւ մինչև այժմ ունեցել է երեք տպագրութիւն՝ հետեւեալ ձեւով:

1. Պատմութեան առաջին հրատարակութիւնը կատարուել է 1669 թուին Ամսթեր-

<sup>1</sup> Դարբիժեցին եղել է ման Ձարմախլ գաւառի (Սպահանի շրջան) վաղիգամ այժմ անքաղաք գիւղում, ուր տեսել է մի ձեռագիր Յայտմաւորք եւ ընդօրինակել յիշատակարանը:

<sup>2</sup> Սոյն խորագիրը պատկանում է էյմիսմին 1896 թուի հրատարակութեան:

տամուս, Ոսկան Վարդապետի ձեռքով, դեռ եւս պատմագրի կենդանութեան ժամանակ:

2. Երկրորդ անգամ տպագրուել է 1884 թուին Ս. Էլմիածնի (Վաղարշապատում):

3. Երրորդ հրատարակութիւնն եւս կատարուել է Ս. Էլմիածնի 1896 թուին:

Սոյն տպագրութիւնները, յատկապէս առաջինը, վերջին երկուսի հետ ունեն որոշ տարբերութիւններ, որոնց համառոտ ձեւով կ'ուզեք անդրադառնալ ստորեւ:

Ինչպէս Ոսկան երեւանցու, այնպէս էլ Էլմիածնի տպագրութիւնները կատարուած չեն բուն պատմագրի, այսինքն պատմագրի ձեռքով գրած գրքի վրայից:

Էլմիածնի հրատարակութիւնները Էդել եւ Աթանաս Դպրի եւ Աւետիս Երէցի ձեռագրերի վրայից, որոնք կատարուել են մայր ձեռագրից Դուրիթեցու թելագրութեամբ, ծախսով ու հակողութեամբ, որի ակթիւ Աւետիս Երէցն այսպէս է գրում իր ընդօրինակած յիշատակաբանում.

«...Շնորհօք եւ սղորմութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գրեալ եղիւ գիրքս որ կոչի Պատմագիրք ի մեծ քուսականի Հայոց ՌձժԻ (1666), ի մայրաքաղաքս Եւրեան ի դուռն սրբոյ Նիկողոսոսյոս որ կոչի Կաթուղիկէ. հագաքարմութեամբ, ծախիւք եւ արդեամբք, Առաքեալ վարդապետի, որ է նոյն ինքն այս պատմագիրքս շինողն եւ արարողն, Թավրիզցի Առաքեալ վարդապետն որ վասն գործնակն քաղաքացանելոյ ետ գրել գայս գիրքս, որ եւ այս Հինգերորդ<sup>3</sup> գիրք է որ ինքեան Առաքեալ վարդապետի ձեռագրիք օրինակէն գաղափարեցաւ, որ յոյժ ջանիւ եւ քաղում հագաքարմութեամբ ծախի ինչս եւ ձեռամբ գրեաց գրել տայ, առաջին վասն բաղմամայոյ, եւ երկրորդ վասն առ տէր յիշատակիս<sup>4</sup>:

Ուրեմն միայն Աւետիս Երէցի միջոցով ընդօրինակուած է Հինգ օրինակ, Աթանաս Դպրի միջոցով, ըստ ձեռք բերուածի, մէկ օրինակ, իսկ թէ ուրիշներ միջոցով քանի՞ օրինակ՝ անյայտ է:

<sup>3</sup> Ընդգծումը մեր կողմից:

<sup>4</sup> 1896 թուի տպագրութիւն, էջ 637:

6. Անասեանը գրում է<sup>5</sup> որ Մաշտոցեան Մատենադարանում բացի վերոյիշեալ երկու ձեռագրերից՝ համար 1772 եւ 1773, կան երկու այլ գրչագրեր եւս՝ համար 5025 եւ 7296ի ներքոյ: Հետաքրքիր է իմանալ, թէ այս օրինակները, ինչպէս եւ Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան մատենադարանի համար 137 ձեռագիրը, պատկանում են Աթանաս Դպրի եւ Աւետիս Երէցի գրքչի<sup>6</sup>, թէ՛ այլ ընդօրինակութիւն են: Նոյնպէս անորոշ է թէ Ոսկանի ձեռքի տակ եղածը այս Հինգ օրինակներից է թէ ոչ. պարզ է միայն այն, որ Էլմիածնի ձեռքով եւ կատարուել յաւելումներ, շատ հաւանաբար Հէնց Իրենի՝ պատմագրի ձեռքով, մինչ Ոսկանի ունեցած օրինակը գուրկ է կղել սրբագրութիւնից:

Ստորեւ տալիս ենք այն էջերը, որոնցում հատուածային տարբերութիւններ կան 1669ի եւ 1896ի տպագրութիւնների միջեւ:

153, 210, 218, 223, 237, 248, 261, 274, 275, 278, 280, 306, 313, 315, 316, 320, 321, 324, 338-39, 343, 350, 352-53, 355, 356, 363, 367, 368-69, 404-5, 407, 409, 417-18, 419, 438, 442, 469-70, 472-75, 480, 519, 527, 542, 566-67, 571, 585-650-նոյնն են, 651-665<sup>7</sup>:

Վերոյիշեալ հատուածներից, որոնք չբնական 1669 թուի հրատարակութեան մէջ, ստորեւ առաջ ենք բերում չորս հատը: Սբրանցից առաջինը գեղեցիկ մտքով մի քառակ է, երկրորդը՝ Ջուղայի յայտնի նկարիչ Վարպետ Մինասի մասին խիստ կարեւոր տեղեկութիւններ, երրորդը՝ Զարմահալի Վաստիգան գիւղում դռնուած ձեռագիր մի Յայսմաուրբի նկարագրութիւն,

5 6. Անասեան, *Հայկական Մատենադարանութիւն*, Ա Հատոր, էջ 1161:

6 Այլ տեղ, Աւետիս Երէցը գրում է. «...Տեւք գիրք եմ ընդօրինակել մինչև այժմ» (1896ի հրատ., էջ 70, ծանօթ.): Մտաւորովց պարզուեց որ Վիեննայի օրինակը Աւետիս Երէցի չորրորդ ընդօրինակութիւնն է:

7 1896-ի հրատարակութեան վերջում տրուած է միայն բառային ու տառային տարբերութիւնների ցանկը:

իսկ վերջինը՝ Շահ Սէֆու թագադրութեան մասին է:

ա. էջ 237, ԺԹ (19րդ) գլխի վերջում, որպէս ծանօթութիւն.

«Կերա դառնիչ եւ արբի լեղի,  
Ոչ էր դառն քան զազաւութիւն,  
Բարձի զաղ եւ դարձիք ի վերայ  
Ոչ էր ծանր քան զպարսոս մարդոյ»:

Գրքում գրուած է արձակ ձեւով, մենք դրեցինք տողատուած:

բ. էջ 409-413, ԻԹ (29րդ) գլխի վերջում.

«Այդ մինչեւ ցարդ, այսօր աղիւսն արար սա յեկեղեցիս Հայոց»<sup>8</sup>. յօնդրեցուք ի բարեպարգեւ Տեառնէ Աստուծոյ, զի ընդ երկար կնեօք պանծացէ զսա քարց իմիք վտանգի, զի այլ եւս աղիւսն յաւելցէ յազաւ եւ յեկեղեցիս Հայոց:

Այլ եւ պարս վարկանիւ մեզ ակամատես եղելոցս ոչ գոնց առնել եւ այլովք եւս շրմոքնալից արամբք. քեպէտ եւ են աշխարհականք, այլ զի են հաւատով քրիստոնեայք եւ յագգէս Հայոց, որք են պարծամք եւ օգուտ մերում ազգի, որոց անուամբն են վարպետ Միմաս եւ վարպետ Յակոբբան, եւ են առաւ երկոքեան ի ցեղէն Զուղայեցւոց:

Այս վարպետ Միմասս ստացաւ իւր արուեստ պատկերահանութեան եւ ծաղկարարութեան. քանզի ի տիս տղայութեան իւրոյ ի պատմառէ ի մեքէ եղիւ մին գնալ ի քաղաքն Բերիայ, որ է Հայաս, եւ անդ եզրիս գայր մօն պատկերահան վարպետ, որ էր ազգաւ փռանկ, աշակերտեցաւ փռանկ վարպետին եւ ուսաւ ի նմանէ. եւ յետ ուսանելուն ինքնագլուխ եղիւ. եւ եկեալ ի քաղաքն Ասպահանք բնակեցաւ ի տան իւրում որ էր ի մէջ Զուղայեցւոց, եւ գործէր գաբուստն իւր գաւառիկի արահմութեան: Եւ վասն կարի առաւել վայելչակիրտ գեղեցկատիպ չմտալատես յօրինածոյ արաւեստին, մեծամեծն Զուղայեցւոց տանէին ի ծաղկել եւ ի պատկերագրել գլարիս ապարանից եւ տանց իւրեանց. այսպէս եւ հօջայ Նազարի որդի հօջայ Սարգիսազմ տարեալ ի տուն իւր առ

ի գարդաբել զապարանս իւր ծաղկօք եւ պատկերօք: Եւ մինչ տակաւին ոչ էր աւարտեալ գտումն ի ծաղկելոյն, պատահեցաւ զի քաղաքն Պարսից Շահսէֆի եկն ի տուն հօջայ Սարգիսազմ, որոյ նստելով իրեն զննեալ հայէր ի ծաղկիս եւ ի պատկերս զոր նկարեալ կայր տեսանէր զի չբնագ եւ գեղապանծ եւ յոյժ մտնակի կերպագրեալք են ամենեքեան. սկսաւ հարցանել քաղաքն ի հօջայ Սարգիսազմ վասն նկարի վարպետին, քէ ուստի իցէ, եւ նա ասաց ի մերով ժողովուրդեան եւ ի Հայոց ազգէս, եւ ահաւանիկ այժմ յայն իմն տան ի գործի կայ, զոր եւ հրամայեաց քաղաքն կոչել զնա, եւ իրեն եկն՝ հարցեալ քաղաքն տեղեկացաւ ամենայն որպիսութեանցն: Եւ անդէն ի նմին խրախուսութեան՝ որ բազմեալ կային, հրամայեաց արքայ՝ Միմաս վարպետին՝ եւ հեռոց ի նախարարաց իւրոց գտմն որոյ անունն էր Զրադ խան, որոյ կերպարանքն էին յոյժ անգեղ եւ դրժպատեհ, եւ ասաց. զպատկերս սորա այժմ աստե՛ն նստեալ նկարես, վասն իւրեանց զգոսանաց ծառայ եւ խրախուսութեան: Իսկ Զրադ խան իրեն ետես քէ առ ի կատակս առնելոյ նկարեն գաւառիկն իւր, վասն որոյ սկսաւ քէ մեքել զայս եւ գրեալն եւ այլեւայլ գեղեպարանք եւ շրջմբել կողմէ ի կողմն, զի քերես նկարեալ պատկերն ոչ իցէ ամենեւին համաման: Բայց Միմաս վարպետն ըստ հրամանաց քաղաքին առժամայն ի նմին տեղաջ ի մէջ խրախուսութեան նկարեաց գասացելոյ գտանք զպատկերն, որ այնքան յար եւ նման էր համեմատութեամբ, որ ընդ քաղաքին ամենեքեան ի հանդիսին եղեալքն, մեծաւ հիացմամբ գարնացեալք եղին վասն առաւել նմանութեանն, եւ փառս վեր առաքէին Աստուծոյ՝ տուողին այնպիսոյ շնորհաց մարդկան: Եւ յայնմ օրէ եւ առ յայալ քաղաքն եւ նախարարքն իւր ոչ քաղին գնալ ի ձեռաց, այլ հաւնապաղ ի տուն իւրեանց պահէին վասն նկարակերտութեան:

Եւ եղիւ զի քաղաքն Ռուսաց սիրոյ ազգաւ հրեշտակ խաղաղութեան առաքեալց առ Շահսէֆի Պարսից քաղաքն, եւ ընդ բազմազան աղերսանացն կայր հաւաք մի բազայ, զոր ազգն Պարսից իւրեանց քառիւն

<sup>8</sup> Պատկեր եղածը 1889-ի մէջ, գծեց յետոյ եկազ նախագատարութիւնն է:

շունդար տան, այլ եւ կայր ունեւայր, որ եւ մա էր յագգէն եւ աշխարհէն մուտաց, որ վասն սպասաւորութեան հաւիգ հկեալ էր. այս հաւաք եւ սորին սպասաւոր այլն յոյժ տաւալ հանելի եւ ախորժ թուեցաւ կամաց Շահստփի թագաւորին. յաղագս որոյ թագաւորն հրամայեաց Նազար Մահամատ րէկին, թէ գկերպարանս սցաա երկոցունցն մըկարես գրագային եւ գիւր պահող սպասաւորին, որպէս եւ եմ որ տեսանես: Եւ այս Նազար թէկս էր ազգաւ Պարսիկ, եւ գլուխ ամենայն պատկերահամ եւ մկարիք արուեստաւորաց, եւ անուանի յամենայն ազգս Պարսից, որ միայն ի տան թագաւորին եւ մեծամեծ իշխանացն ի գործի կայր, եւ այս Մահամատ րէկս ի բազում աւուրս մկարեաց, բայց ոչ ըստ որակին եւ անդամոցն համեմատս եւ մեման: Եւ ապա հրոտայեաց արքայ՝ Մինաս Վարպետին մկարել գկերպարանս բազային եւ գմորին սպասաւորին, եւ մա ըստ աստուածատուր շնորհացն ի սեկաւ աւուրս մկարեաց գկերպարանս մագա, եւ այլմեան համեմատ՝ որ թագաւորն ինքն եւ ամենայն մախարարքն իւր անպատմելի հիւացմամբ սեմանցեալք՝ գարմացեալ կային ի վերայ մորաւ. եւ յաղագս այնմ որ կարի առաւել հաւանեցաւ թագաւորն հրամայեաց պարգեւս տալ Վարպետ Մինասին տասն եւ երկու թուման դրամ ինամ (Նուէր - Լ. Մ.) եւ յոտից մինչեւ ցգուլոն խլաթ. այլ եւ գրել ի կարգս զինուորաց թագաւորին, զի ամ յամէ տացեն մնա օրմայ (ռոճիկ - Լ. Մ.) յարբուսակամ գամէն, որպէս եւ այլոց զինուորաց թագաւորին...»:

*Ապա պատմում է, թէ երա Հոչակը տա-  
րածուելով, ամէն ազգից աշակերտներ ե-  
կան երա մօտ սովորելու:*

Գ. էջ 417-418. Լ (30րդ) գլխի սկիզբնե-  
րում.

«Յետ այսորիկ ելալ յԱսպահանայ, գը-  
նացալ ի մորին գաւառն գոր Գանդիւման կո-  
չին, ի գիւղն որ անուանի Վաստիկան, գը-  
տալ անդ Յայամաւուրք մի որոյ յիշատե-  
կարանն էր այսպէս, Աւարտեցաւ գիրքս  
Յայամաւուրացս յամի ՊՂԱ (1442) թուա-  
կանութեան Հայոց, ձեռամբ յոգնամեղ  
գրչի Կարապետ Նրիցու, ի խնդրոյ Մահ-  
դեւի Միխթարայ: Եւ գրեցաւ սուրբ գիրքս

ի քաղաքս Վան. . .», ապա տալիս է այլ  
մանրամասնութիւններ:

Գ. էջ 585. ՄԲ (52րդ) գլխի վերջում,  
որը թէր յաւելումով կրկնուում է նաեւ էջ  
650ում (ՄԶ գլխի վերջում).

«Եւ ի Ռժժե (1666) թուին մերոյ յամ-  
սեանն Սեպտեմբրի ժ (10) մեռա այս երկ-  
րորդ Շահաբասն, եւ ի մոյն թուին եւ ի  
մոյն ամսեանն, եղին ի տեղի մորա թագա-  
ւոր գմորին որդին գՇահստփին, ըստ անուան  
իւրոյ պապոյն, մասն որոյ գտա անուանեմ  
Շահստփի: Եւ յետ մտելոյ Շահստփոյ թա-  
գաւոր ինքն հանապազ ցաւագար կայր, այլ  
եւ շրջակայ թշնամիք ապաւանկեցին յեր-  
կիրն սորա, վասն որոյ հմայոզք աւագեալ  
եմ, օրն եւ ժամն, յարուս մտեալ էր թագա-  
ւոր՝ ոչ է լեալ օր բախտաւոր. վասն որոյ  
հմայելով ընտրեցին օր բազդաւոր եւ վերս-  
տին եղին յաթառ, եւ փոխեցին գանուս եւ  
անուանեցին Շահ Սուլէյման, եւ այժմ Շահ  
Սուլէյման քանն սմա»:

*Կարն մի քանի յաւելեալ գլուխներ եւս:*  
Դարերէնքն մեռել է 1670 թուին, սրա-  
նից 300 տարի առաջ եւ թաղուել էջմիւսնի  
միարանակաւ գերեզմանատանը, եփրեմ  
Կաթողիկոսի գերեզմանից դէպի Հարաւ-  
որեւելք:

*Տապանաբարն ունի Հետեւեալ պարզ ար-  
ձանագրութիւնը՝.*

«Պատմագիրն

այս է տապան

Առայլի վարդապետին

Ռժժե (1670) թուին»:

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

Նոր Զուգար

Յ իր կենսագրութեան գլխաւոր աղբիւրը իր պատ-  
մագրութեան յիշատակարանն է, իսկ իր մասին բազ-  
մաթիւ գրքերում կայ գրութեան, որոնց մէջ կարե-  
ւոր են.

ա) Ե. Ամասեան. «Հայկական Մասնագիտու-  
թիւն», Ա Հատոր, Երեւան, 1950, էջ 1144:

բ) Ա. Առաքելեան. «Հայ Ժողովրդի Մասուր Մը-  
լակոյթի Զարգացման Պատմութիւն», Բ Հատոր, Ե-  
րեւան, 1904, էջ 519:

գ) Լեւ. «Ներկեր», Գ Հատոր, Երեւան, 1900, էջ  
351: